## 2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՐԴԵՀԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2019թ. Տեսչական մարմնին է մուտքագրվել 886 դիմում-բողոք: Ըստ բնագավառների պատկերն այսպիսին է:

**Տրանսպորտային անվտանգության բնագավառ.** հասցեագրվել է 130 դիմում-բողոք: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, տնտեսավարող սուբյեկտներից և քաղաքացիներից ստացված հիմնավոր 98 գրություններից ու դիմումներից լուծում են ստացել 96-ը:

**Էներգետիկայի և էներգասպառման բնագավառ.** պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, տնտեսավարող սուբյեկտներից և քաղաքացիներից ստացված հիմնավոր *27* դիմում-բողոքներից և գրություններից լուծում են ստացել 26-ը (96,3 %): Դիմում-բողոքներից 24-ը ստացվել են ՀՀ քաղաքացիներից:

**Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառ.** ստացվել է *96* դիմում-բողոք: Դրանց հիման վրա իրականացվել են հրդեհատեխնիկական հետազոտություններ:

**Քաղաքաշինության բնագավառ.** ստացվել է 613 դիմում-բողոք, որից 263-ը՝ (43%) ստացվել է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, իսկ 350-ը՝ (57%) տնտեսավարող սուբյեկտներից և քաղաքացիներից Հիմնավոր 607 դիմումներից պատասխան է տրվել 566-ին (93.2%):

**Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառ.** ստացվել է 20 դիմում-գրություն: Դրանց հիման վրա կատարվել են ստուգումներ Արագածոտնի մարզի 8, Կոտայքի մարզի 4, Տավուշի մարզի 4, Արարատի մարզի 3, Արմավիրի մարզի 1 համայնքներում: